



Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Տ Ա Ն Ն Կ Ի Լ Ի Կ Ի Ո Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ա Ն Լ Ո Ւ Յ Ս Ի Տ Ա Կ *

1954 թվականի մայիսի 9-ին, կիրակի օրը, 86 տարեկան հասակում վախճանվում էր Ամենայն Հայոց Հայրապետ Գևորգ Զ-ը:

Գևորգ Զ-ի մահով նվիրապետական մեր երեք Աթոռները՝ Ամենայն Հայոց Հայրապետությունը, Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը և Երուսաղեմի Պատրիարքությունը մնում էին թափուր: 1948 թվականից ի վեր թափուր էր Երուսաղեմի Պատրիարքական Աթոռը, և հակառակ 1951 թվականի հունիսին Ամենայն Հայոց Հայրապետին տրված հավատարմացումներին, անհասկանալի պատճառներով հետաձգվում էր պատրիարքական ընտրությունը, մինչ պատրիարքական ընտրության կանոնադրությունը հրահանգում էր նոր պատրիարքի ընտրության նախաձեռնել հանգուցյալ պատրիարքի քառասուներից հետո:

Թափուր էր նաև, 1952 թվականի հունիսի 22-ից ի վեր, Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռը, որովհետև այստեղ ևս կային լուրջ դժվարություններ, «չըրեքամերժ զգացումներ»՝ կաթողիկոսական նոր ընտրության և 1941 թվականի կանոնադրության գործադրության առնչությամբ: Լուսահոգի Գարեգին Վեհր իր կենդանության «գիտցավ իր կարելին ի գործ դնել, կարենալ պահպանելու համար անկարելի շեղոթություն մը իրերամարտ ուժերու միջև» («Հասկ», 1957, № 3, էջ 75):

* Երրոնակված «էջմիածին» ամսագրի 1959 թվականի Ը-Ք, Ժ և ԺԱ համարներին:

Գարեգին Վեհրի կենդանության, տարակարծության հիմն էր կազմում Կիլիկիո Կաթողիկոսության 1941-ի կանոնադրությունը, որի դեմ բողոքել էր կաթողիկոսը և զիտել այդ կանոնադրության «պաշտպաններ»-ի և նրա դեմ բողոքողների անզիջող պայքարը, և իր «հիվանդության անկողնի մեջ» հառաչում էր լուսահոգին, մտահոգված, թե «ինչ պիտի լինի իմ մահից հետո Կիլիկիո Աթոռի վիճակը» («Հասկ», 1957, № 3, էջ 75):

Ինչպես Գարեգին Վեհր, այնպես էլ «1941 թվականի կանոնադրության» քննադատները գործակցել են Կիլիկյան Աթոռին և հաճախ նույնիսկ անդամակցել Անթիլիասի Ազգային կենտրոնական վարչության, առ ի շղոյս լուսավազույն օրհնքի, Կիլիկյան Աթոռը անիշխանության շմատնելու, Սիրիայի, Լիբանանի և Կիպրոսի հայ ազգային-եկեղեցական կյանքը շանդամալուծելու ազնիվ մտահոգությամբ, բայց ճշտ ձևի և ըստ բովանդակության» վերապահումներ անելով 1941 թվականի կանոնադրության մասին:

Գարեգին կաթողիկոսի 1947 թվականի բողոքի հիման վրա, Ազգային կենտրոնական վարչությունը կազմում էր մի հանձնախումբ, որը «Վեհափառ Հայրապետի և ժողովականության մտածողությունները պիտի համաձայնեցներ, օրինական վերաքննությունը միշտ հիմք ունենալով» («Հասկ», 1957, № 3, էջ 76), 1941 թվականի կանոնադրության 35-րդ հոդվածի հիման վրա:

Հանձնաժողովը Ազգային կենտրոնական վարչության էր ներկայացնում իր տեղեկա-

գիրը: Իսկ վերջինս, Ազգային ընդհանուր ժողովի հետ միասին, «հարմարագույն միջոցը կնկատեր գոյութիւն ունեցող կանոնադրութեան վրա հավելումը մի քանի նոր հոդվածներու, որոնք խտացնեն Վեհափառ Հայրապետի մտքերը»:

Պետք է հրավիրվեր Կիլիկյան Աթոռի Ազգային ընդհանուր ժողով՝ 1941 թվականի կանոնադրութեան հոդվածները վերաքննութեան, վերամշակման ենթարկելու:

Մինչ ժողովի հրավիրումը ձգձգվում էր, վրա հասավ Գարեգին կաթողիկոսի հիվանդութիւնը և անակնկալ մահը:

«Ահա այդպիսի պարագաներու և իրերամարտ հոսանքներու դեմ հանդիման գտնվող Կիլիկյան Աթոռը՝ դրվում էր ավելի դժվարին կացութեան առաջ:

Նախքան կաթողիկոսի թաղումը, միաբանական ընդհանուր ժողովը միաձայն տեղապահ է ընտրում իսկ արքեպիսկոպոս Աջապահյանին (երկրորդ անգամ):

Տեղապահ իսկ սրբազանը գլխավորում էր Կիլիկյան Աթոռի պատգամավորութիւնը Գևորգ Զ Կաթողիկոսի թաղման ժամանակ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի թաղումը կատարվում է մայիսի 27-ին, Ս. Էջմիածնում: Թաղմանական հանդիսութիւններին նախագահում է Կիլիկյան Աթոռի տեղապահ իսկ արքեպիսկոպոսը, որը և պատարագում է թաղման օրը և իր հուզիչ դամբանականի մեջ՝ «Միշտ անշարժ պահեալ Աթոռ Հայկազնեան» («Էջմիածին», 1954, հուլիս, էջ 4), բերում է Կիլիկյան Աթոռի ողջ միաբանութեան և ժողովրդի վշտի և հարգանքի անկեղծ արտահայտութիւնը Մայր Աթոռին:

1954 թվականի հունիսի 5-ին Մայր Աթոռում գումարվում է նվիրակտանական Աթոռների ներկայացուցիչների, Գերագույն Հոգեվոր հորհրդի և թաղման ներկա թեմակալ առաջնորդների համատեղ ժողովը: Ժողովի նախագահութեան կազմի մեջ ընտրվում է նաև իսկ սրբազանը: Ժողովի առաջին նիստում կարգացվում և ընդունվում է հանգուցյալ Գևորգ Զ Կաթողիկոսի կտակ-կոնդակը, ապա ամբողջացվում է Գերագույն Հոգևոր հորհրդի կազմը: Իսկ երկրորդ նիստում, հունիսի 7-ին, միաձայն ընդունվում է կոչ Մայր Հայրենիքի և Սփյուռքի հավատացյալ ժողովրդին ուղղված, Այդ կոչում նախ խոսվում է Գևորգ Զ Կաթողիկոսի մահով Հայ Եկեղեցու կրած մեծ կորստի մասին, ապա առաջ է բաշխում Հայ Եկեղեցու միասնականութեան ամրապնդման հարցը:

«...Հանգուցյալ Հայրապետը մեզ ավանդ է թողել՝ ազգային-եկեղեցական միութեան և միասնականութեան սրբազան պատգամը:

Մենք՝ ներկա ժողովին մասնակցողներս, մեր սեպուհ պարտականութիւնն ենք համարում վշտի այս ծանր օրերին դիմելու համայն հայ ժողովրդին, հանգուցյալ Վեհափառի մեզ ավանդ թողած միասնականութեան սրբազան պատգամով՝ է՛լ ավելի սերտորեն համախմբել Հայ Եկեղեցու, Մայր Հայրենիքի, հայ նվիրակտանական Աթոռների և մեր Միածնաէջ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի շուրջը:

Թո՛ղ Ամենակալի հզոր Աջը հովանի լինի Ամենայն Հայոց Ընդհանրական Աթոռի վրա և մոտիկ ժամանակում վերացվի սգի սև քողը Մայր Աթոռի վրայից:

Թո՛ղ Տերը անսասան պահի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, մեր նվիրակտանական Աթոռները և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը»:

Կիլիկյան Կաթողիկոսութեան պաշտոնաթերթ «Հասկ»-ը իր 1954 թվականի մայիս-հունիս միացյալ համարի խմբագրականը նվիրում է հանգուցյալ «Ամենայն Հայոց Հայրապետ»-ին, որտեղ նախ խոսելով «Ս. Էջմիածնի զանգակներու զողանջնի տարածվող մեծ սուգի» և ղեպի Ս. Էջմիածնի սահմանաչափական սիրտ, հավատարմութեան ու միասնականութեան զգացումներ»-ի մասին, եղբակացվում էր. «Կիլիկիո Կաթողիկոսութիւնը, ինչպես իր տեղապահ սրբազանով, միաբանութեան անդամներով ու մտավորականներով փութալով հանգուցյալ Հայրապետի հուղարկավորութեան ու թաղման արարողութեանց մասնակցելու, բաժնեց Ս. Էջմիածնի մեծ սուգը, նույնպես կտածե անսասան հավատքը, թե... Ս. Էջմիածնի Մայր Աթոռը պիտի շարունակե մնալ գործոն ու լուսաբաշխ կեդրոնը համայն հայութեան, մինչև որ, ժամանակի լրումով, կատարվի կաթողիկոսական ընտրութիւնը և վերցվի սուգի քողը Ս. Էջմիածնի Հայրապետական Գահնն, ի մխիթարութիւն միաբանութեան ու հավատացյալ ժողովուրդին և ի պայծառութիւն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ»:

Իսկ սրբազանը Ս. Էջմիածնից վերադառնալուց հետո մտածում է Անթիլիասում Կիլիկյան թեմերի Ազգային ընդհանուր ժողովի հրավիրումով վերջ տալ Կիլիկյան Աթոռի սգին: 1954 թվականի օգոստոսի 20 թվակիր պաշտոնագրով հրահանգում էր թեմակալ առաջնորդներին՝ «նիստի հրավիրել թեմիդ պատկանելի Գավառական ժողովը և Ազգային ընդհանուր ժողովի դադրած անդամներուն տեղ նորերու ընտրութիւնը փութով կատարել» և ապա «կաթողիկոսական ընտրութեան պատգամավորներու ընտրութիւնը»:

Տեղապահ սրբազանը 1954 թվականի դեկտեմբերի 16-ին, «Ազգին և Աթոռին հանդես» իր ունեցած պատասխանատվության ողջ գիտակցությամբ, Անթիլիասում հրավիրում է ազգային ընդհանուր ժողով, կաթողիկոսի ընտրության համար:

Կաթողիկոսական ընտրության հարցը և մտալուտ ազգային ընդհանուր ժողովի հրավիրումը է՛լ ավելի են սրում միջկուսակցական պայքարը: Պատգամավորների և կողմերի միջև տարածայնությունները խորանում են, ժողովուրդը պառակտվում է և հազար սրբազանը խոհեմություն է համարում այսպիսի լարված ու անհամերաշխ մթնոլորտում շգումարել Ազգային ընդհանուր ժողով, եկեղեցական ստույգ պառակտումի և ազգային աղետի առաջը առնելու ազնիվ մտահոգությամբ: Խաղ սրբազանը մտածում է ավելի ժամանակ տալ պատգամավորներին և կողմերին, ավելի համերաշխ, խաղաղ հանդես գալու ընտրության մեջ, հորդորելով բողոքին՝ վեր դասել Կիլիկյան Աթոռի և Եկեղեցու գերագույն շահերը հատվածական նեղ շահերից:

1954 դեկտեմբեր 13 թվակիր պատճառաբանված պաշտոնագրով տեղապահը դիմում էր պատգամավորներին. «Ազգային ընդհանուր ժողովի գումարումը և կաթողիկոսական հարցը ավելի ևս կխորացնեն տիրող անհամաձայնությունները, փոխանակ ստեղծելու սպասված համերաշխությունը. այսուկհաղորդենք, թե առ այժմ հետաձգված է վերոհիշյալ ժողովներու գումարումը:

Տեղապահ սրբազանի ազգային ընդհանուր ժողովի գումարումը հետաձգելու այդ որոշումը հանդիպում է քաղաքական որոշ մտայնության տեր մի շարք եկեղեցական և աշխարհական երեսփոխանների բողոքին: Գեկտեմբերի 18-ին 18 պատգամավորների բողոքը մատուցվում է տեղապահին Տ. Զարեհ, Տ. Խորեն, Տ. Ղևոնդ եպիսկոպոսների կողմից, մինչ կիբանանի և Սիրիայի հայկական մամուլում կաթողիկոսական ընտրության հարցի շուրջ մղվում էր «լրագրական անվայել պայքարը, խոսակցությունները և դավերը հասած էին արդեն ծայրահեղ աստիճանի մը, պարզ այն պատճառով», որ իրապես «կողմ»-երեն մեկը կհամոռեր, դարավոր օրենքներու, ավանդությանց հակառակ, իր քաղաքական կամքը պարտադրել ընտրության մեջ, տիրել Անթիլիասին և իր թեկնածուն բազմեցնել Կաթողիկոսական Աթոռի վրա («Հասկ», 1957, № 6—7, էջ 180), կաթողիկոսն ու Աթոռը իր քաղաքական նպատակներին ծառայեցնելու համար:

Այնուհետև տեղապահ սրբազանի ուշադրության կենտրոնումն էր միշտ կաթողիկոսական ընտրության հարցը և նրա բարվոք լուծումը: 1955 թվականի հունիսին Խաղ սրբազանը Անթիլիասում հրավիրում է թեմակալ առաջնորդների խորհրդակցություն՝ վանական միաբանական ներքին մի շարք հարցերի քննության համար: Տ. Զարեհ, Տ. Խորեն, Տ. Ղևոնդ սրբազանները սակայն «առիթը օգտագործելով հիշեցուցին տեղապահին իր խոստումը և թեմերու պահանջը, կաթողիկոսական ընտրության համար» («Հասկ», 1957, № 7, էջ 183), շնորհակալ նաև սպառնալիքը, որ «կաթողիկոսական ընտրությունը անխուսափելի կերպով պետք է կատարվի... ըսվեցավ պարզապես, թե ժողովի հրավերը ուղղելն հետո, նոր հետաձգման ձեռնարկ մը անլսելի պիտի մնա, թե թեմակալ եպիսկոպոսները որևէ զնով պիտի չձգեն պատգամավորական ժողովը, թե... թեմակալ եպիսկոպոսներեն մեկը պիտի նախագահե պատգամավորական ժողովին, եթե ինք՝ տեղապահը, ձգե հեռանա» («Հասկ», անդ, էջ 183): 1955 թվականի հունիսին ծրագրված այս պլանը «չափազիտական ճշտությամբ» գործադրվեց 1956 թվականի փետրվարի 14-ին և 20-ին:

Այնուամենայնիվ 1955 թվականի հունիսի 2-ին, թեմակալ առաջնորդների ստիպման տակ, «տեղվույն վրա անմիջապես» խմբագրվում է մի հրավիրագիր և հանձնվում շտապ թեմակալ առաջնորդներին, կաթողիկոսական ընտրության վերջնական թվական նշանակելով «ուրբաթ, 14 հոկտեմբեր 1955» («Հասկ», անդ, էջ 184):

Միևնույն ժամանակաշրջանում առաջ էին տարվում նաև Մայր Աթոռում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության նախապատրաստական աշխատանքները: Ըստ 1945 թվականի Մայր Աթոռում կազմված «Ազգային-եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրության», Ամենայն Հայոց նոր Կաթողիկոսի ընտրությունը պետք է կատարվի ոչ շուտ քան վեց ամիս հետո կաթողիկոսի մահից (հոդված 21), տեղակալի և Գերագույն Հոգևոր Խորհրդի հրավերով Ս. էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովում (հոդված 20):

Գերագույն Հոգևոր Խորհուրդը մինչև 1955 թվականի հունվարը սպասում էր Գևորգ Զ-ի կողմից նշանակված տեղակալի Մայր Աթոռ ժամանմանը, անմիջապես սկսելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության նախապատրաստական աշխատանքներին: Հունվարին Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշում էր ընդունում անմիջապես

ձեռնարկելու Հայրապետական ընտրությունների և դիմում էր կառավարության, Ս. էջմիածնում 1955 թվականի սեպտեմբերին գումարվելիք Ազգային-եկեղեցական սրբազամար ժողով հրավիրելու համար համապատասխան կառավարական համաձայնություն ստանալու համար:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, մինչև 1955 թվականի օգոստոսի 18-ը վերջացնելով Ամենայն Հայոց Հայրապետի ընտրության հետ կապված բոլոր նախապատրաստական աշխատանքները, բոլոր թեմերին ուղղած իր շրջաբերական հեռագրով և ապա նամակով ավետում էր առաջիկա սեպտեմբերի 25—30 օրերին Ս. էջմիածնում Ազգային-եկեղեցական ժողով գումարելու մասին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության համար («էջմիածին», 1955, № 8, էջ 3, 5):

Գերագույն Հոգևոր Խորհուրդը սեպտեմբերի 15 թվակիր իր հեռագրով, ուղղված Խաղարեպետական, Կիլիկյան թեմերի բոլոր եպիսկոպոսներին և միաբանության, շեշտելով 1955 թվականի սեպտեմբերի 25-ին Մայր Աթոռում գումարվելիք Ազգային-եկեղեցական ժողովի պատմական նշանակությունը, խնդրում էր, որ Կիլիկյան Աթոռը անպայման իր մասնակցությունը բերի իր տեղապահով, թեմակալ եպիսկոպոսներով և պատգամավորներով: Վերաբերյալ Ազգային-եկեղեցական ժողովում կաթողիկոսական ընտրությունից բացի, քննության են առնվելու մի շարք կարևոր եկեղեցական հարցեր, ուստի անհրաժեշտ ենք համարում Ձեր և Ձեր թեմական պատգամավորության ներկայությունը: Այդ են թելադրում Հայոց Եկեղեցու և Ազգի շահերը: Խիստ ցավալի կլինի, եթե Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունն իր արժանավայել մասնակցությունը չունենա համազգային-եկեղեցական ժողովին: Սփյուռքի բոլոր համայնքներից պատգամավորներ ընտրված են և վիզաներն ապահովված բացի Ձեր թեմերից: Վիզաներ ապահովել ենք նաև մեծ թվով ուխտավորների համար: Կրկին խնդրում ենք, որ պեսպի Դուք անձամբ, ինչպես և Ձեր եպիսկոպոսներն ու աշխարհական պատգամավորները մասնակցություն ունենան Ազգային-եկեղեցական ժողովին»:

1955 թվականի սեպտեմբերի 29-ին Մայր Աթոռում, հանդիսավոր իրադրության մեջ, բացվում է Ազգային-եկեղեցական ժողովը: Ժողովի Բ նիստում, 1955 թվականի սեպտեմբերի 30-ին, գումարված Ս. էջմիածնի Մայր Տաճարում, Ամենայն Հայոց Կաթողիկոս է ընտրվում Ռուսիսիայի և Բուլղարիա-

յի հայոց թեմակալ առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը 125 ձայնով: Ազգային-եկեղեցական ժողովում ներկա են լինում Սփյուռքից, Հայաստանից և ներքին թեմերից եկեղեցական և աշխարհական 137 պատգամավորներ, որոնք ազատ և անկաշկանդ կերպով ընտրում են Ամենայն Հայոց Կաթողիկոսին, սրբությունը կատարելով պատգամավորի իրենց պարտքը:

Կիլիկյան Աթոռը այս ընտրության մասնակցում է երկու պատգամավորներով, մեկ եկեղեցական՝ Դերենիկ սրբազան և մեկ աշխարհական՝ Հրանտ Գևորգյան:

1955 թվականի հոկտեմբերի 2-ին Ս. էջմիածնի Մայր Տաճարում, համազգային խանդավառության մեջ, մեծվայելուչ հանդիսությամբ կատարվեց նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծումը: Այս արժանավոր ընտրությամբ սգի սև շղարշը վերացավ Ս. Լուսավորչի Գահի վրայից:

Ազգային-եկեղեցական ժողովի Դ և վերջին նիստում (7 հոկտեմբերի), երբ սպառվել էին ժողովի օրակարգի հարցերը, նորընտիր Հայրապետը, ժողովին ներկայացնելով իր ապագա գործունեության 12 կետերից բաղկացած ծրագիրը, շեմոքեն կանգ էր առնում Մայր Աթոռի և Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների, թեմերի համագործակցության անհրաժեշտության վրա: «Մեր հարաբերությունը մեր մյուս նվիրապետական Աթոռներու և թեմերու հետ պիտի ըլլա սերտ, ի Քրիստոս միության խորունկ սկզբունքի վրա: Մայր Աթոռի և մյուս Աթոռներու ու թեմերու հարաբերությունները պետք է ըլլան ղիվանագիտական, այլ պարզ, անկեղծ և եղբայրական սիրո մթնոլորտի մը մեջ: Կակնարկեմ հատկապես Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, որուն շուրջ օրոշ դժվարություններ կստեղծվին: Ծա կուզեմ հավատալ, որ Հայաստանյայց Եկեղեցվո պարտաճանաչ և գիտակից պաշտոնյաներ պիտի շտապեն իրենց կողմնակի նպատակներով, այլ՝ Հայաստանյայց Եկեղեցվո միության գերագույն և սրբազան սկզբունքը ամեն նկատումն վեր պիտի դասեն: Դժվարություն ծագելու պարագային իսկ ես բացարձակ վստահություն ցնիմ մեր հավատացյալ ժողովուրդի առողջ բնազդի վրա, որով ճշմարիտ ճանապարհի մեջ պիտի մնա միշտ: Սիրո, համերաշխության և եղբայրական ողջուն ունիմ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռին, միաբանության և ամբողջ ժողովուրդին, Ս. Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո Պատրիարքությանց, մեր բոլոր թեմերուն և համայն հավատացյալ հայ ժողովուրդին»:

1955 թվականի վերջերին բովանդակ հատկության սրտազին ուշադրությունը կենտրոնացել էր Ամենայն Հայոց և Տանն Կիլիկիո կաթողիկոսների ընտրության վրա:

Մայր Աթոռը ունեցել էր իր արժանավոր Գահակալը հանձին վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, որի սրտի ամենաջերմ ցանկությունն էր օր առօր տեսնել նաև Տանն Կիլիկիո և Երուսաղեմի Աթոռների վրայից սգի քողի վերացումը, խաղաղ և համերաշխ պայմաններում կատարված արժանավոր ընտրության:

Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությունից հետո էլ Անթիլիասում շարունակվում էին կաթողիկոսական ընտրության նախապատրաստական աշխատանքներն ու խորհրդակցությունները, ստեղծելու համար համաձայնության կայուն հող համերաշխ ընտրության համար: Ընդդիմադիրները, որոնց թվում և Կիլիկյան Աթոռի միաբանության մեծամասնությունը, ըստ օրինի բողոքել էին սիրիական կառավարության և տեղապահին, պահանջելով Հալեպի Գավառական ժողովի լուծումը և նոր ժողովի ընտրությունը: Ընդդիմադիրները և միաբանությունը նույնիսկ այդ մասին հուշագիր էին ներկայացրել սիրիական կառավարության:

Կիլիկիո կաթողիկոսական ընտրության հարցը ավելի քան երբեք մտել էր փակուղու մեջ: Կաթողիկոսական ընտրության թվականի ճշտումից հետո, ընտրապայքարը ստանում էր նոր թափ, տարվում էր հատվածական քանդիչ աշխատանք Աթոռը գրավելու, Հալեպում կատարվել էին նույնիսկ ցույցեր Հալեպի Գավառական ժողովի դեմ: Ստեղծված այսպիսի պայմաններ մեջ, պարզ է, որ երբեք չէր կարող կատարվել կաթողիկոսական ընտրություն: Ստեղծված ջղայնություն և անհանդարտության վիճակում, իսկական տագնապի այդ օրերին, կաթողիկոսական ընտրությունը կլինեք անխոհեմություն և ճակատագրական սխալ:

Տեղապահ հարց սրբազանը 1955 հոկտեմբեր 9 թվակիր հեռագրով Կիլիկյան թեմերին հայտնում էր կաթողիկոսական ընտրության հետաձգման մասին և մամուլին էր հանձնում հետևյալ պատճառաբանյալ հայտարարությունը.

«Երջանկահիշատակ Գարեգին Ա կաթողիկոսի վախճանումեն հետո, Կաթողիկոսական Աթոռին համար արժանավոր գահակալի մը ընտրության խնդիրը մեր ուշադրության գլխավոր առարկան եղավ, մեր տեղապահական պաշտոնավարության բովանդակ շըրջանին:

Անցնող երեք տարիներու ընթացքին երկիցս որոշեցինք ընտրության թվականը և ապա ստիպվեցանք հետաձգելու զայն, որովհետև, հակառակ մեզի տրված հավաստիքներուն, թե ընտրությունը ժողովրդային բուր խավերուն ընդունելի ձևով պիտի կատարվեր, բաղձացված համերաշխությունը չիրականացավ:

Ներկա տարվույս մեջ, նույն հավաստիքները ավելի որոշ կերպով տրվեցան և մենք, ցանկալով վերջ տալ ստեղծված կացության, որոշեցինք հոկտեմբեր 14-ը, իբրև թվական Կիլիկիո կաթողիկոսական ընտրության:

Ակիզբեն ի վեր մեր միակ ցանկությունը եղած է, որ Կիլիկիո կաթողիկոսական ընտրությունը կատարվի համերաշխորեն և ոչ թե հատվածի մը ցանկությամբ, վասնզի Եկեղեցին բոլոր ժողովուրդին է և անոր գահակալը հասարակաց հայր ամենեղուն:

Սակայն, հակառակ մեր այս փափազներուն և կաթողիկոսական ընտրության թվականի մերձավորության, տակավին շենք տեսներ, դժբախտաբար, այն համերաշխությունը, որուն վրա հույս դնելով հոկտեմբեր 14-ը ընտրության թվական որոշեցինք:

Մեր միակ բաղձանքն է, որ ընտրությունը կատարվի հատվածական հաշիվներ և հետապնդումներ ավելի բարձր մակարդակի մը վրա և միայն մեր Եկեղեցվո և մեր ժողովուրդի ընդհանուր շահերուն նկատառումով: Դժբախտաբար տիրող կացությունը հեռու է երաշխիք կարենալ հանդիսանալու համար մեր բոլորի բաղձանքին:

Այս պարագան գրած ենք արդեն Ս. Աթոռ երկու թեմակալ սրբազաններին գերաշնորհ Զարեհ և Ղևոնդ եպիսկոպոսներուն: Անձնապես եկած ենք այն եղրակացության, թե այս պայմաններու տակ կաթողիկոսական ընտրության ձեռնարկելը աղետ և ողբերգություն պիտի բերեր մեր Աթոռին և մեր ժողովուրդին: Եվ մենք, իբրև տեղապահ այս դարավոր հաստատության, պիտի շուգեցինք առիթն ու միջոցը հանդիսանալ սույն աղետին՝ պատասխանատու մնալով պատմության ահեղ դատաստանին առջև:

Ցավ ի սիրտ, ստիպված ենք հոս նշելու, թե պատասխանատու մարմիններու և կաթողիկոսական ընտրության պատգամավորներու մոտ չգտանք փուլթ և աշխատանք, դարման հայթայթելու այս կացության և հաջողցնելու կաթողիկոսական ընտրությունը համերաշխ մթնոլորտի մը մեջ, հակառակ անցնող երեք տարիներու ժամանակա-

շրջանին, երբ վերոհիշյալները ունեին ամեն կարելիություն և առիթ, հաջողությամբ պսակելու մեր ճիգերը այս ուղղությամբ:

Հետևաբար, վերոհիշյալ լուրջ նկատումները հաշվի առնելով, իմ եկեղեցական խղճին և պարտականությունս դեմ կնկատեմ հրավերներ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս ընտրող Պատգամավորական ժողովը և նախագահելու անոր:

Այս առիթով, կհորդորենք մեր սիրեցյալ ժողովուրդը և մանավանդ պատասխանատու մարմիններն ու անձնավորությունները, որ ի գործ դնեն իրենց լավագույնը՝ ստեղծելու համար այն բաղձալի կացությունը, որով կարելի ըլլա առանց հապաղման և ընդհանուրի փափագին համաձայն կատարելու կաթողիկոսական ընտրությունը և Կիլիկիո մեր Աթոռը ունենա իր արժանավոր գահակալը, ի պայծառություն Հայ Եկեղեցվո և ի փառս Աստուծո» («Հասկ», 1957, № 9, էջ 298—299):

Տեղապահի պաշտոնական այս հայտարարությունից հետո Լիրանանի առաջնորդ Տ. Խորեն սրբազանը և Քաղաքական ժողովի անդամները իրենց հրաժարականներն էին ներկայացնում թեմի զավառական ժողովին, հոկտեմբերի 12-ին:

Մինչ այդ Բեյրութ էին ժամանում Հայկպի թեմի առաջնորդ Տ. Զարեհ եպիսկոպոսը (հոկտեմբերի 11-ին) և Կիպրոսի թեմի առաջնորդ Տ. Ղևոնդ եպիսկոպոսը (հոկտեմբերի 13-ին) և անմիջական խորհրդակցության էին սկսում Խորեն եպիսկոպոսի հետ («Հասկ», 1957, № 9), և պահանջում էին տեղապահից «թեմակալ եպիսկոպոսներու հետ խորհրդակցության նստիլ»: չբավարարվելով տեղապահի հոկտեմբեր 9-ի պատճառաբանյալ հայտարարությամբ, առ ոչինչ համարել փորձելով նաև ամբողջ միաբանության կարծիքն ու ժողովրդի ցանկությունը և, «ենկատելով, որ վանքին մեջ հարմար վայր մը չկար սրտբաց խորհրդակցության համար (ընդգծումը խմբագրությանն է), որոշվեցավ հանդիպումը սարքել Բիքֆայայի հովոցին մեջ, որտեղ տեղապահ և առաջնորդներ (Տ. Զարեհ, Տ. Խորեն և Տ. Ղևոնդ եպիսկոպոսներ) սրտբաց և փոթորկալից խոսակցություն ունեցան, այնպես որ բուն վիճաբանությանց արձագանքները դուրսն լսելի կդառնային» («Հասկ», 1957, № 9, էջ 304):

Այս «սրտբաց և փոթորկալից» խորհրդակցության ժամանակ Տ. Զարեհ, Տ. Խորեն և Տ.

Ղևոնդ սրբազանները «տեղապահին ներկայացուցին ստեղծված տագնապը լուծելու արմատական երկու կերպ».

«ա. նկատելով, որ խաղ սրբազան ի վիճակի չէ, այլևս, կատարելու կաթողիկոսական ընտրությունը, որովհետև երրորդ այս հետաձգումով բաժակը հորդած է և ոչ ոք պիտի անսա իր գրույն և խոսքին, պե՛տք է անմիջականորեն ներկայացնեն իր հրաժարականը տեղապահի պաշտոնեն, ուրի՛շ եկեղեցականի մը առիթ տալով, որ հաջողցնեն կաթողիկոսական ընտրությունը:

բ. Զհրաժարելու պարագային, թեմակալ երեք եպիսկոպոս առաջնորդները կհայտնեն առանց երկդիմություն, թե 14 հոկտեմբերի այս հանդիպումը վերջինը պիտի ըլլար և թե իրենց, առաջնորդներուն համար, տեղապահը պիտի դադրեր վերին և օրինավոր ներկայացուցիչը ըլլալն Կիլիկիո Կաթողիկոսության»:

Այս ձևով վերջնագիր էր տրվում խաղ սրբազանին միաբանության երեք անդամների կողմից, որոնք երբեք չէին մտածում, որ միակողմանի ընտրությունը կործանարար է և՛ Եկեղեցու և՛ Ազգի համար: Արդարև, առանց ընդհանուր համաձայնության և համերաշխության ընտրված մի կաթողիկոս ի՞նչ օգուտ կարող էր բերել Եկեղեցուն և ժողովրդին, բացի պառակտումից, հակամարտությանց սրումից: Նորընտիր կաթողիկոսը պետք է վայելի եթե ոչ բոլորի սերը ընտրության հարցում, գոնե բոլորի վստահությունն ու հարգանքը և ներկայացնի ողջ Եկեղեցու և ժողովրդի բաղձանքը: Տեղապահ սրբազանը արդարև չէր կարող նախագահել մի ժողովի, որը միայն մի հատված էր ներկայացնում: Խաղ սրբազանը շատ ճիշտ կերպով էր մտածում, որ մինչև որ կողմերը չհամաձայնվեին, ընտրություն չէր կարող լինել: Այդպես էին մտածում և՛ Մայր Աթոռը, և՛ եպիսկոպոսական դասի, և՛ պատգամավորներին, և՛ ժողովրդի ջախջախիչ մեծամասնությունը:

Կացությունը լուրջ էր և հղի անակնկալներով թե՛ Եկեղեցու և թե՛ ժողովրդի համար: Այսպիսի պայմաններում միայն Բվեների ձևական առավելությամբ չէր կարելի լուծել և վճռել ամեն բան:

Տ. Զարեհ, Տ. Խորեն, Տ. Ղևոնդ սրբազանների «փութկոտությունը»՝ անպայման ժողով դումարելու և ընտրություն կատարելու, հենց առաջին օրից էլ հետապնդում էր որոշ նպատակ: Մախաթը չի կարելի երկար թաքցրնել տոպրակի մեջ:

Հակառակ հադ սրբազանի ցանկության Ազգային ընդհանուր ժողով հրավիրելու կաթողիկոսական ընտրության համար, բայց ապա ստիպողաբար եղած հետաձգումները մահաճուրդի համար չէին երբեք, այլ տրամաբանական և խոհեմ հետևությունը ստեղծված վտանգավոր կացության, որովհետև համազործակցություն չկար ոչ միաբանության շարքերում, ոչ կոսակցության միջև և ոչ էլ պետական շրջանակներում: Իսկ անհամաձայնությամբ կատարված մի ընտրություն չարիք միայն կարող էր լինել:

Բիքֆայայի «սրտբաց խորհրդակցություն»-ում հադ սրբազանը հուսահատած, տկարություն է ունենում երեքի ճնշման տակ, ընտրելու «շարյաց փոքրագույնը», այն է խոստանում է հրաժարվել: «Բայց ներկա եպիսկոպոսները պնդեցին», որ հրաժարականը «պատրաստվի տեղվույն վրա և հադ սրբազանը զայն ստորագրե անմիջապես»: Տ. Զարեհ եպիսկոպոսը շտապ կերպով պատրաստում է «սեւագրություն մը հրաժարագրին» և հադ սրբազանը ստորագրում է: Այս առթիվ «Հասկ»-ը (1957, № 9, էջ 395) ցնծուն ու խանդավառ, անում է հետևյալ հատկանշական խորհրդածությունը, որ հադ սրբազանի ճնշման տակ կատարած հրաժարումից հետո, հրաժարում, որը հադ սրբազանի կողմից կատարված ճակատագրական տակտիկական սխալ էր, «կիրիկիո կաթողիկոսական ընտրության համար նոր հույսեր և ուղիներ կբացվեին» (ընդգծումը խմբագրությանն է):

Հոկտեմբեր 14-ի նույն երեկոյան, «հրաժարյալ» առաջնորդ խորեն եպիսկոպոսը կիրանանի գավառական ժողովին ավետում էր տեղապահի «զրավոր հրաժարման մասին, թիսկ ներկա երեսփոխանները, նկատելով, որ հադ արքեպիսկոպոսի հրաժարումով չբացած կըլլան կիրանանի առաջնորդին և վարչության հրաժարման պատճառները», հանձնարարում էր առաջնորդին և վարչության «շարունակել իրենց աշխատանքն ու ճիգերը կիրիկիո կաթողիկոսական ընտրությունը» իրենց ցանկալի ձևով զուլս բերելու համար:

Միաբանական ընդհանուր ժողովի ատենակառ Տ. Զարեհ եպիսկոպոսը հոկտեմբերի 16-ին, շրջաբերականով ժողովի է հրավիրում միաբանությանը, օրակարգ նշանակելով նոր տեղապահի ընտրությունը: հադ սրբազանը, հոկտեմբեր 15 թվակիր նամակով, արգարացիորեն բողոքում է, օրենքի

հիման վրա, ատենակառի այս նոր «փութկոտություն» դեմ, գրելով հետևյալը.

«Զարմանքով կարգացինք շրջաբերական մը, որով ժողովի հրավեր կուղղեք մեր միաբանության՝ օրակարգ նշանակելով «հրաժարյալ կաթողիկոսական տեղապահ Տ. հադ սրբազան եպիսկոպոսի տեղ նոր տեղապահի մը ընտրությունը»:

Ըստ օրինի որևէ հրաժարական ի զորու կղանա երբ ժողովը, որուն ներկայացված է այդ հրաժարականը, մեծամասնության ձայնով կընդունի զայն: Մեր խոսակցությանը ընթացքին համաձայն գտնվեցանք, որ միաբանությունը ժողովի հրավիրվի մեր կողմե, երբ էջմիածին գտնվող մեր միաբանները վերադառնան Անթիլիաս. արդ, մեզի համար անհասկնալի կմնա, թե ինչու և ո՞ր իրավասություններ ընդհանուր ժողովի կհրավիրեք միաբանությունը վաղվան համար:

Ըստ մեր կանոնադրության և ըստ Ազգային Սահմանադրության տրամադրությանց, որքան ատեն որ ժողովը իր վերջնական որոշումը չէ կայացուցած մեր հրաժարականի մասին, մեր իրավասությունն է իբրև տեղապահ՝ ընդհանուր ժողովի հրավիրել միաբանությունը և նախագահել անոր. մենք հարմար ատենին պիտի որոշենք ժողովի թվականը և նիստի պիտի հրավիրենք զայն» («Հասկ», 1957, № 9, էջ 307):

հադ սրբազանը այնուհետև մի նոր շրջաբերականով միաբանական ընդհանուր ժողով էր հրավիրում 1955 թվականի հոկտեմբերի 23-ի կիրակի օրը, կաթողիկոսարանի դահլիճում: Մինչ այդ նոր տեղապահի պաշտոնի համար առաջադրվում է Տ. Դերենիկ եպիսկոպոսի թեկնածությունը: «Զարեհ, խորեն, Ղևոնդ եպիսկոպոսներն ալ համաձայն եղած էին Դերենիկ եպիսկոպոսի տեղապահություն» («Հասկ», 1957, № 9, էջ 310):

Հոկտեմբերի 23-ին, միաբանական ընդհանուր ժողովում սակայն, գաղտնի քվեարկությամբ, տեղապահ է ընտրվում Տ. խորեն եպիսկոպոսը: Միաբանական ժողովի նախագահ Տ. Զարեհ եպիսկոպոսը այդ մասին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին հեռագրում է հետևյալը.

«հադ արքեպիսկոպոսի հրաժարման պատճառով միաբանական ժողովը խորեն եպիսկոպոս Բարոյանը ընտրեց տեղապահ»:

Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով կիրիկիո կաթողիկոսական նորընտիր տեղապահին, հեռագրում է.

«Ընդունեցեք Մեր ամենաչերմ մաղթանքները Ձեր գործի հաջողության համար, ստեղ-

ծելու լավագույն պայմաններ, որպեսզի Մծի Տանն Կիլիկիո Աթոռը արժանավոր Գահակ ունենա մեր Ս. Եկեղեցվո միութեան և սիրո պահպանման նվիրական ոգիով» («Էջմիածին», 1955, № 11, էջ 6):

Ապա միաբանական ընդհանուր ժողովը որոշում է ընդունում 1956 թվականի փետրվարի 14-ին կատարել կաթողիկոսական ընտրութուն:

Խորեն սրբազանի տեղապահության առաջին ամիսներին էլ շարունակվում էին բանակցութունները՝ խաղաղությամբ և համարաշխույթյան մեջ կատարելու համար ընտրութունը, իսկ ընդդիմադիր մամուլը պարզ կերպով գրում էր, որ «կաթողիկոսական ընտրութուն չի կրնար տեղի ունենալ, նախքան Հալեպի նոր Գավառական ժողովի ընտրութունը... Բերիո թեմը պետք է ընտրեց կաթողիկոսական ընտրութեան նոր պատգամավորներ, քանի հիններ պայօրինի են: Ուստի կաթողիկոսական ընտրութեան թվականը՝ փետրվար 14 ինքնաբերաբար պայմանավոր կդառնա» («Ջարթոնք», 1955 հոկտ. 25):

Ընդդիմադիր մամուլը միաժամանակ հույս էր հայտնում, որ նոր տեղապահը «իր պաշտոնավարութեան շրջանին շունքեր այնպիսի քայլեր, որոնք ավելի ևս կբարդացնեն տիրող պահպանման կացութունը» («Ջարթոնք», 1955 հոկտ. 25):

Արդարև, ոչ մեկ ժամանակ, կաթողիկոսական ընտրապայքարը չէր ստացել այսքան սուր և լարված բնույթ: Ժողովրդի ջախջախիչ մեծամասնութունը, Աթոռի միաբանութեան մեծամասնութեան հետ, ընդդիմադիր ամբողջ մամուլը մտածում էին, որ ընտրութունը քանի որ վնաս պիտի բերեր Կիլիկյան Աթոռին և ժողովրդին, հարմար էր, որ հետաձգվեր, ինչպես շատ հաճախ եղել էր անցյալում, նման դեպքերի առթիվ:

1956 թվականի փետրվար 5 թվակիր պաշտոնագրով, հալեպահայ մի շարք ծանոթ ազգայիններ, քաղաքական կուսակցութուններ, մշակութային, մարզական, հայրենակցական կազմակերպութուններ, հանուն Հալեպի թեմի, բողոքում էին տեղապահ սրբազանին՝ փետրվարի 14-ին հրավիրված Ազգային ընդհանուր ժողովի և կայանալիք կաթողիկոսական ընտրութեան դեմ, «ապօրինի նկատելով Հալեպի ներկա Գավառական ժողովի գոյութունը և անկե բխած կաթողիկոսական ընտրութեան մասնակցելիք պատգամավորութունը» և խնդրում էին տեղապահին՝ նկատի ունենալով «ներկա կացութունը, Ձերդ Արքայանության միջոցով հետաձգվի կաթողիկոսական ընտրութեան թվականը, սպասելով կացութեան բարելավման»:

«Հասկ»-ը (1957 № 12, էջ 428), փոխանակ ըստ էութեան պատասխանելու այս արդար և օրինավոր պահանջին, ինչպես նաև կաթողիկոսական ընտրութեան հարցում փոխանակ ընդդիմադիր մամուլի սկզբունքային դիրքը ճիշտ գնահատելու որպես եկեղեցական միասնութեան դրսևորում, այս բողոքներին և պահանջներին տվել է բոլորովին յուրահատուկ և արտաոռց մեկնութուն, այդ բողոքի մեջ տեսնել փորձելով Մայր Աթոռի մատր, Կիլիկյան Աթոռը նսեմացնելու, Անթիլիասը շնջելու և կամ առ առավելն այն «վանահայրութեան վերածելու» համար («Հասկ», 1958, № 1, էջ 1):

«Հասկ»-ը իր այս շքնաղ գյուտը հիմնավորելու համար հենվել է նույնիսկ Անթիլիասի վանքի խոհանոցի աշխատողների ավելորդամիտ խոսակցութունների վրա («Հասկ», 1958, № 1, էջ 10):

«Հասկ»-ը իր անբարեխղճութունը և անպատասխանատվութունը հասցրել է այնտեղ, որ 1956 թվականի փետրվարին Ամենայն Հայոց Հայրապետի փոխայցելութունը Անթիլիաս և սրտազին անկեղծութունը՝ սիրով մասնակցելու «Անթիլիասի մեջ Մծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական ընտրութեան և օծման» հանդիսութուններին («Ուղևորութուն Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի», էջ 13), համարում է «թաքուն նպատակներ» առաջնորդված մի դավադրութուն, որի նպատակն է Կիլիկյան Աթոռի ջնջումը:

Դեռևս 1955 թվականի հոկտեմբերին, «Ազգային-եկեղեցական ժողովի գումարման օրերում, մեր շարժ մը բարձրաստիճան հոգևորականներու և ամբիկաճայ, լոճոճահայ և հեղկահայ աշխարհակա պատգամավորներու հետ խորհրդակցաբար կազմվեցավ վեհափառ Հայրապետի արտասահման մեկնելու գաղափար, ա՛յ ավելի ամբապնդելու սերտացնելու համար կապը Մայր Աթոռին և մեր նվիրապետական մյուս Աթոռներուն և թեմերուն միջև» («Ուղևորութուն», էջ 12):

Արտասահման իր կատարած հովվապետական այցելութեան ժամանակ վեհափառ Հայրապետի ջերմ ցանկութունն էր միաժամանակ «մասնակցելու Անթիլիասի մեջ Մծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի ընտրութեան և օծման, այն համոզմամբ, որ իր ներկայութեամբ այդ ընտրութունը կարող է կատարվել ընդհանուր համերաշխութեան և խաղաղութեան պայմաններու մեջ» («Ուղևորութուն», էջ 13), և այս առթիվ ու այս ցանկութեամբ հեռագրում էր Խորեն սրբազանին:

«Առաջնորդված մեր Ս. Եկեղեցվո սիրո, միութեան և գերագույն շահերը պաշտպանելու և ամրապնդելու գիտակցութեանն, որոշած ենք անձամբ մասնակցել Մեծի Տանն կիլիկիո կաթողիկոսի ընտրութեան և օծման: Կղիմենք Ձեզ և կիսնդրենք, որպեսզի ի պահանջել հարկին տնօրինեք հետաձգումը մինչև Մեր ժամանումը Անթիլիաս: Կմեկնինք Մոսկվա և կսպասենք լիբանանյան Մեր և Մեր շքախմբի վիզաներուն համար: Հեռագրով դիմելու ենք լիբանանի Մեծարգո Վարչապետ Նորին Վսեմութիւն Ռաշիդ Քարամեին»:

Եթե Մայր Աթոռի և Վեհափառ Հայրապետի ցանկութիւնը լինի տապալել Անթիլիասի կաթողիկոսական ընտրութիւնը, կարիք չկար, և տրամաբանական ալ չէր, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Անթիլիաս մեկնէր, որովհետեւ «Հասկ»-ի իսկ վկայութեամբ, կաթողիկոսական ընտրութեան շուրջ կային արդեն շատ լուրջ և սկզբունքային տարաձայնութիւններ, կողմերը պառակտւել էին, միաբանութիւնը երկփեղկվել էր և ընտրութիւնը գտնվում էր բոլորովին ձախորդութեան մատնվելու հնարավորութեան առջ: Այսպիսի պայմաններում, այդ բանն անելու համար բավ են եղել 1941 թվականի դեկտեմբեր 8-ին Անթիլիաս հասած Մայր Աթոռի երկու պատգամավորներ, որոնք «կարելի ամեն փորձ ըրին Պատգամավորական ժողովի մեծամասնութիւնը» իրենց ենթարկելու, «ընտրութիւնը ձախորդութեան մատնելու, Կաթողիկոսական Աթոռը թափուր պահել տալու համար և ճաշողեցան» (ընդգծումը խմբագրութեանն է): Եթե ճշմարտութիւնը այդպէս էր, էլ ի՞նչ կարիք կար Ամենայն Հայոց Կաթողիկոսի Անթիլիաս գնալուն, ընտրութիւնը տապալելու համար:

Ինչպէս երևում է, այստեղ չկա տրամաբանութեան հետին նշույն անգամ: Ամենայն Հայոց Հայրապետը Անթիլիաս էր մեկնում ազնիվ զգացմունքներով, շինարար ծրագրերով, այն քաղցր և երջանիկ հույսով, որ 1955 թվականի սեպտեմբերի 30-ին, Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեամբ, «վերացավ սոդ քոլը Ս. Լուսավորչի Գահի վրային» (Հայրապետական անդրանիկ կոնդակ), «բայց մեր մյուս Աթոռներն ալ պետք ունին սոդ քոլերուն վերացման: Եվ ահա, կարծեք Աստված կկարգադրէ մեր գործերը: Հերթը եկած է Տանն Կիլիկիո Աթոռին և Մենք ուրախութեամբ և շինարար լավագույն ծրագրերով, Մեր սիրտը բաց, եկանք այստեղ, որպեսզի միասնականութեան և սիրո

ոգիով առաջնորդված, այստեղ ալ ընտրութիւն կատարենք և Անթիլիասի Աթոռը օծտենք իր Գահակալով, որպեսզի հերթը գա Երուսաղեմի Պատրիարքութեան:

Ուրեմն, Մեր մտածումն այս է— էջմիածին ունեցավ իր Գահակալը: Անթիլիաս պետք է ունենա և պիտի ունենա իր Գահակալը: Եվ երբ Երուսաղեմի Աթոռն ալ վերջ տա իր այրիութեան, մեր շորս Աթոռները կունենան իրենց Գահակալները, ու մենք, ձեռք-ձեռքի տված, շրջապատված բարձրաստիճան մյուս հոգևորականներին, պիտի կարողանանք միասին մտածել, ծրագրել և գործադրել այն բոլոր միջոցառումները, աշխատանքները, որոնք անհրաժեշտ են հօգուտ և ի պայծառութիւն մեր Ս. Եկեղեցվո, ի շինութիւն մեր ժողովուրդի հոգևոր կյանքին և հանսասանութիւն մեր Աթոռներուն» (Ռեզոլուցիան, էջ 48):

Ամենայն Հայոց Հայրապետը Անթիլիաս գնաց ոչ թե Տանն Կիլիկիո Աթոռը ջնջելու, թեմերը հափշտակելու, կամ նրա ժողովուրդը պառակտելու, Եկեղեցին բաղաձայն գործունեությանց տխուր քառերաբով դարձնելու, այլ՝ ընդհակառակը, կամեցավ խաղաղութեան ոգիով միացնել բոլորին Եկեղեցու շուրջ, հանուն մեր ազգի սրբութիւններին, գերագույն շահերի և դրանով առավել զորացնելու Անթիլիասի անբաժանելի նվիրապետական մասնավոր կաթողիկոսութեան Աթոռը Հայ Եկեղեցու մեջ:

Ամենայն Հայոց Հայրապետը 1955 թվականի փետրվարի 12-ին, կիրակի օր, ժամանեց իր շքախմբով Բեյրութ և արժանացավ աննախընթաց և մեծավայել ընդունելութեան կիբանանի ազգային իշխանութեանց, Կիլիկիոյն Աթոռի հոգևորականութեան և ժողովուրդի, ինչպէս և պետութեան կողմից:

Վեհափառ Հայրապետը Անթիլիասի Մայր Տաճարում աղոթելուց հետո, Վեհարանում տվեց իր հայրապետական օրհնութիւնը տեղապահին, միաբանութեան, ազգային իշխանութեանց, մամուլի ներկայացուցիչներին:

Վեհափառ Հայրապետի օրհնաբեր և պատմական գալուստը Կիլիկիոյն Ս. Աթոռ ողջունեց տեղապահ Տ. Խորեն սրբազանը ասելով.

«Ձերդ Վեհափառութեան այս այցելութիւնը, որ իր նախընթացը չէր ունեցած ցարդ մեր եկեղեցական տարեգրութեանց մեջ, հրճվանքով կլեցնէ մեր բոլորին սրտերը, իբրև խորհրդանշան երկու Հայրապետական Աթոռներու անբաժանելի միութեան, ի փառս մեր Ս. Եկեղեցվուն և հօգուտ մերազն ժողովրդյան:

ժողովուրդի այս սիրալիր և ինքնարուխ ընդունելությունը, որուն առարկա հանդիսացավ Ձերդ Ս. Օծուկունը, այս պահուս լավագույն և մխիթարական գրավականն է այն ճշմարտության, որ հայ ժողովուրդը, ուր որ ալ գտնվի, ըլլա Հայրենիքի մեջ, ըլլա Սփյուռքի տարածքին վրա, հոգևին կապված է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցիին և անոր կեդրոն Ս. Էջմիածնին, որուն արժանաբանտիր Գահակալը մեր մեջ ունենալու պատեհությունը ընծայվեցավ մեզի բուրիս:

Բարեղեպ է Ձերդ Վեհափառության օրհնարքի այցելությունը այնպիսի նվիրական առիթով մը, որ երեքուկես տարիների ի վեր թափուր մնացած մեր Աթոռի Գահակալին ընտրությունն էր: Եվս առավել բարեղեպ կնկատեմ Ձերդ Վեհափառության այն նախաձեռնությունը, որով կբարեհաճիք անձամբ մասնակցիլ Մեծի Տանն Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոսի ընտրության և օծման:

Վեհափառ Տեր, պատմական այս բուսկին, պարտք է ինձի նոր շնոր մը ևս դնել այն իրողության վրա, որ արդեն իսկ երկար ժամանակի ի վեր երկու Հայրապետական Աթոռներու միջև գոյություն ունեցող եղբայրական սերն ու միութեան ոգին իրենց ցցուն և մնայուն արտահայտությունը կգտնեն Ս. Օծուկունդ օրհնարիչ այս այցելությամբ: Կիլիկյան Ս. Աթոռը, իր եպիսկոպոսական դասով, իր միաբանությամբ և համայն ժողովուրդով, հավատարիմ Հայաստանյայց Եկեղեցվո ավանդությանց, կուգա անգամ մը ևս հաստատելու այս հանդիսավոր առիթով, որ մի է և ամբողջական Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, իսկ անոր Հայրապետական երկու Աթոռներն ալ սրտակից գործակիցներ են իրարու:

Վեհափառ Տեր, հանուն Կիլիկյան Ս. Աթոռի միաբանության և համայն հայ ժողովրդայն, ի սրտե կաղոթենք առ բարձրալին Աստված, որ անշարժ և անսասան պահե Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Մեծի Տանն Կիլիկիո Հայրապետական Աթոռը, Ս. Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո Պատրիարքական Աթոռները և Ձերդ Վեհափառության պարզև երկար կյանք և բեղուն գործունեություն, որպեսզի կարենաք առավել ևս պայծառացնել Արագածի կատարին հավերժորեն անմար կուսավորչի կանթեղը» («Ուղևորություն», էջ 33—34):

Փետրվարի 12—13-ին Վեհափառ Հայրապետը Անթիլիասում ընդունում էր պաշտոն-

նական մի շարք այցելություններ, ապա տեղապահ Տ. Խորեն սրբազանը Վեհափառ Հայրապետին զեկուցում էր կաթողիկոսական առաջիկա ընտրության մասին:

Վեհափառ Հայրապետին ծանոթ էր Անթիլիասի կաթողիկոսական ընտրության շուրջ ստեղծված անառողջ կացությունը: Նա քաջատեղյակ էր, որ կաթողիկոսական ընտրապայքարը սուր բնույթ էր ստացել և կաթողիկոսական ընտրության հարցը, դուրս գալով հայ ազգային-եկեղեցական շրջանակներից, դարձել էր միջազգային մամուլի և հանրային կարծիքի սեփականություն, որ ներքնապես խոր տարակարծություններ գոյություն ունեին պատգամավորներին, կողմերի, մինչև անգամ միաբանության շարքերում: Մինչ տեղապահ Խորեն սրբազանը աշխատում էր հավաստիացնել «Վեհափառ Հայրապետին խոսակցության ընթացքին, որ Անթիլիասի միաբանության մեջ տարակարծություն չկա կաթողիկոսական ընտրության այս հարցի մեջ...», որ... կիբանանի և Սուրիայի ժողովուրդի համակրանքը իրենց հետ է» («Ուղևորություն», էջ 36):

Վեհափառ Հայրապետը, ուշադիր լսելուց հետո տեղապահ սրբազանի այս բանավոր զեկուցումը, ասում է. «Եթե ամեն ինչ, Խորեն սրբազան, իր բնականոն վիճակին մեջ է, ինչպես Դուք հիմա արտահայտվեցաք Մեր առաջ, ապա ուրեմն կաթողիկոսական ընտրությունը կարելի կըլլա կատարել օրինավոր և խաղաղ պայմաններու մեջ, նշանակված օրը, այսինքն փետրվարի 14-ին և Մեզի կմնա ուրախությամբ նախագահել ընտրության և Տանն Կիլիկիո կաթողիկոսի օծման սուրբ արարողությանը, ըստ կանոնաց մեր Եկեղեցվո» («Ուղևորություն», էջ 36):

Փետրվարի 14-ին Անթիլիասում Վեհափառ Հայրապետին է ներկայանում լիբանահայ քաղաքական, մշակութային կազմակերպությունների հանրածանոթ և բոլորի կողմից հարգված ազգայինների 14 հոգուց բաղկացած մի պատգամավորություն, հայտնի բժշկապետ Ե. Ճիտեճյանի գլխավորությամբ, կիբանանի հայության անունից իրազեկ պահելու Նորին Ս. Օծուկուն՝ Անթիլիասի կաթողիկոսական ընտրության շուրջ ստեղծված ծանր տագնապին:

Վեհափառ Հայրապետը, խորապես կշտադատելով ստեղծված այս անել կացությունը, մտածում էր գտնել մի դարման:

Նույն օրը, երեկոյան ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետը Անթիլիասում որպես հյուր գտնվող եպիսկոպոսներին և Աթոռի բոլոր

միաբան եպիսկոպոսներին հրավիրում էր նախապես որոշված եպիսկոպոսական խորհրդակցական ժողովին, որտեղ խոսելուց հետո նախ Մայր Աթոռի ներկա կացութիւն, իր ծրագրերի, արտասահմանում կատարելիք իր հովվապետական այցելութիւն շինարար նպատակները և նրուանդեմում հրավիրվելիք եպիսկոպոսական ժողովի մասին, իր խոսքի վերջում անդրադառնում էր նաև Անթիլիասի կաթողիկոսական ընտրութիւն հարցին, խորունկ ցավ արտահայտելով «Աթոռի շուրջ ստեղծված տագնապի և տխուր կացութիւն մասին, որ հետո է մխիթարական լինելն»:

Վեհափառ Հայրապետը, խորապես և ճշտորեն քննելով ստեղծված կացութիւնը և վերլուծելով դեպքերի ընթացքը, ժողովին ցույց տվեց, թե ինչ բանի մեջ է Աթոռի շուրջ ստեղծված կացութիւն ամբողջ ողբերգութիւնը: Այն՝ որ

1. Անթիլիասի միաբանութիւնը ինքն իր մեջ բաժանված է երկու իրերամարտ խումբակներու, գրեթե հավասար ուժերով:

2. Խոր և լուրջ տարակարծութիւններ կան ինչպես հասարակական-քաղաքական հոսանքներու, այնպես ալ ժողովրդական լայն խավերու միջև, ու հասարակական կարծիքը համերաշխ չէ:

3. Պետական իշխանութիւնաց կողմէ կասկածի տակ դրված է Հալեպի պատգամավորներու և գավառական ժողովի օրինականութիւնը» («Ուղևորութիւն», էջ 41):

Ապա ժողովում սկսվում է կարծիքների, մտքերի փոխանակութիւն, որից հետո ձգտելով ներկա եպիսկոպոսները, միահամուտ և միասիրտ, խոնարհարար խնդրեցին Վեհափառին աշխատել որոշ ժամանակով հետաձգել տալ Պատգամավորական ժողովի գումարումը՝ կաթողիկոսական ընտրութիւն կապակցութեամբ՝ ստեղծված դրութիւն պատճառով և այդ ժամանակամիջոցին Ամենայն Հայոց Հայրապետը, իբրև Գերագույն Պետը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցւոյ, իր հայրապետական հեղինակութեամբ, փորձեց կողմերը հաշտեցնել և ընտրութիւնը կատարել աղբային-եկեղեցական սիրո և միութիւն ոգիով, համերաշխ մթնոլորտի մեջ» («Ուղևորութիւն», էջ 41—42):

Ժողովին ներկա երկու եպիսկոպոս միայն՝ տեղապահ սրբազանը և Տ. Զարեհ եպիսկոպոսը «տարբեր կարծիքի վրա մնացին, այն է, հաշվի չառնել ո՛չ Կիլիկիան Աթոռի մյուս շորս եպիսկոպոսներու՝ Խաղ արքեպիսկոպոսի, Փառնի, Գերենիկ և Շավարշ եպիսկոպոսներու բողոքը, ո՛չ ժողովրդական լայն զանգվածներու և կազմակերպութիւններու

ընդդիմութիւնը, ո՛չ ալ սուրիական և լիբանանյան իշխանութիւնաց զգուշացումները և փետրվար 14-ին գումարել ընտրական-պատգամավորական ժողովը:

Վեհափառ Հայրապետը, առաջնորդվելով միայն ու միայն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցւոյ միասնականութիւն և հայ ժողովուրդի միասնութիւն գերագույն շահերին, հաստատեց եպիսկոպոսական այս խորհրդակցական ժողովի մեծամասնութիւն տեսակետը և որոշեց հաջորդ օրն իսկ հայրապետական խրատական կողմը ուղղել պատգամավորներուն՝ առաջարկելով հետաձգել Պատգամավորական ժողովի գումարումը և կաթողիկոսական ընտրութիւնը մեկ շաբաթով, մինչև փետրվար 20, հնարավորութիւն տալու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ վերջին անգամ մըն ալ կողմերը հաշտեցնելու փորձ մը կատարել» («Ուղևորութիւն», էջ 42):

Փետրվարի 14-ին, երեքշաբթի օրը, Անթիլիասի Վեհաբանում բացվեց Կիլիկիան թեմերի Պատգամավորական ժողովի խորհրդակցական նիստը, լսելու համար Վեհափառ Հայրապետի պատգամը: Ժողովը բացվեց Վեհափառ Հայրապետի Տերունական աղթքով, որից հետո նա տվեց իր սիրո ողջույնը և հայրապետական օրհնութիւնը, ապա կանգ առավ Ս. Էջմիածնի և Հայ Եկեղեցու վերազարթոնքի վրա, որ «Մայր Աթոռը իր սգո քողը վերցուց Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեամբ: Բայց մյուս Աթոռներն ալ պետք ունին սգո քողերուն վերացման»:

Ապա Վեհափառ Հայրապետը անդրադառնալով կաթողիկոսական ընտրութիւն շուրջ հարուցված անհամաձայնութիւններին, բոլոր ներկաների ուշադրութիւնն էր հանձնում, որ «Մենք անցնող երկու օրերու ընթացքին տեսանք և հաստատեցինք, որ այս ընտրութիւն շուրջը ստեղծված է որոշ կացութիւն մը, որ մեզ չի տանիր դեպի խաղաղութիւն և շինութիւն Ս. Եկեղեցւոյ, եթե մենք չկարողանանք միջամտել և կանխել այն, ինչ որ թերևս աղետալի դառնա ժողովուրդին և Եկեղեցւոյն խաղաղութիւն համար»:

Նկատի ունենալով այս բոլոր հանգամանքները, կիսափազինք Մեր խոսքը ըսել այս առիթով, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, Մեր վերջին խոսքը, ուղղված ձեզի: Կմնա, որ դուք, սիրելի՛ հավատացյալներ, դատեք և համապատասխան վերաբերմունք ճշտեք այդ հարցին նկատմամբ:

Մեր խորհուրդն է, հորդորն ու առաջարկը, որ այսօր գումարվելիք ժողովը հետաձգվի մեկ շաբաթով, բացվի հառաջիկա երկուշաբթիի Կփափագինք, ձեզի և ուրիշներու հետ, որոնք սրտցավորեն կմոտենան հարցին, պաղարյունով, հանդարտորեն և միմիայն Եկեղեցվո շահերեն առաջնորդված, առանց որևէ կողմնակի նկատումի, փորձել համերաշխության գետին մը գտնել, հասկացողության եզր մը գտնել, որպեսզի այս ընտրությունը կատարվի խաղաղության, միության և սիրո մթնոլորտի մը մեջ:

Այլապես, և այս կրեսնք սրտի խորունկ ցավով, անհասկանալի և անիմաստ կղառնա մեր եկեղեցական կյանքը: Ոստիկաններն շրջապատված, ժողովրդային այնկոծումով, կոփվով ու նախատինքով մթնոլորտ կարելի չէ ըմբռնել Եկեղեցիեն ներս: Այս պայմաններուն մեջ մենք մեզ կօխտենք որպես Եկեղեցի:

Ոչ միայն ամբողջ հայությունը, այլև բարեկամ և ոչ բարեկամ ժողովուրդներ և պետություններ, ուժեր հայտնի կամ անհայտ, կհետևին մեր ընթացքին: Հետևաբար կխնդրենք, որ լսեք Մեր խորհուրդը, բայց մի՛ նկատեք զայն պարտադիր հրահանգ: Ազատ եք ընտրելու երկու ճանապարհներն մին:

Առաջինը այն է, զոր ցույց տվինք:

Երկրորդ՝ թերևս չսովի Մեր ձայնը և զուր որոշեք այս ժողովը բանալ, որոշումներ տալ և ընտրություններ կատարել: Կամքը ձերն է: Բայց Ամենայն Հայոց Կաթողիկոսը այդ պայմաններու տակ պիտի ըմանակցի և, ցավոք սրտի, Իր վերջին օրհնությունը տալի ետք, պիտի բաժնվի այս երկրին, որ խաղաղության անկյուն մըն է Միջերկրականի ափերուն, և տխուր պիտի ըլլա հաստատել, որ բնության այս ներդաշնակ անկյունին մեջ մեր Եկեղեցին աններդաշնակ է:

Միեւրթի՛ պատգամավորներ և զավակնեո մեր Ս. Եկեղեցվո, կաղոթենք, որ Տերը լուսավորե ձեզ և առաջնորդե Ս. Հոգիով. ամեն» («Ուղևորություն», էջ 49—50):

Վեհափառ Հայրապետը Իր խոսքը եղրափակելուց հետո հեռանում է ժողովից, ազատ թողնելով ժողովականներին իրենց մտքերի ու կարծիքների փոխանակության մեջ:

Վիճաբանությունների ընթացքում ժողովականների մի մասը պաշտպանում է Վեհափառ Հայրապետի առաջարկը, այն է՝ հետաձգել Պատգամավորական ժողովի գումարումը մի շաբաթով, մինչև փետրվարի 20-ը: Ժողովականների երկրորդ խումբը, որ

ըր մեծամասնություն էր կազմում ժողովում, պնդում էր, որ Պատգամավորական ժողովը այն օրն իսկ պետք է տեղի ունենա, պետք է մանդատները հաստատվեն, դիվանը կազմվի և հետո նկատի առնվի Վեհափառ Հայրապետի թիվադրությունը ժողովի հետաձգման մասին:

Այս երկրորդ խումբը պահանջում էր տեղապահից՝ անմիջապես բանալ Պատգամավորական ժողովը և անցնել գործի, այն միակ առարկությամբ, որ... օրենքը այդպես է տրամադրում: Տարրական լրջությունից զուրկ առարկություններ էին անշուշտ «օրենքը կարելի չէ խախտել», «օրենքը ամեն բանից վեր է» և այլն, կարծեք թե ժողովի գումարման ութ օրով հետաձգումը սահմանադրական օրենքի և կամ մի որևէ օրենքի խախտում լիներ: Տեղապահ սրբազանը, լուրջ տատանումներից հետո, բաց է անում «Պատգամավորական ժողով»-ը, որովհետև բողոքող կողմը, որի թիվում և Մայր Աթոռի երկու պատգամավորները՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ Տ. Վարդան սրբազանը և պրոֆ. Ա. Առաքելյանը, Անթիլիասի միաբանության ներկայացուցիչներ Տ. Փանեն, Տ. Գերենիկ, Տ. Եավարշ եպիսկոպոսներ և ապա Սիրիայից և Լիբանանից մի շարք պատգամավորներ հեռանում են ժողովից:

Բողոքող պատգամավորների մեկնումից հետո, մնացած 39 պատգամավորների մասնակցությամբ, հատվածական Պատգամավորական ժողովը շարունակում է իր աշխատանքները:

Այնուամենայնիվ Վեհափառ Հայրապետը, միշտ լավատես, շարունակեց Իր հաշտարար աշխատանքները, կողմերի միջև ստեղծելու համար համերաշխ և խաղաղ վստահության մի մթնոլորտ: Բայց, դժբախտաբար, փետրվարի 14—20 օրերի ընթացքում կատարված խորհրդակցությունները, թիվադրությունները, համաձայնության փորձերը պարզ և անհերքելի կերպով ցույց էին տալիս, որ «հատվածական կողմը» որոշել էր ամեն զնով ձախողեցնել Վեհափառ Հայրապետի, Կոստանդնուպոլսի պատրիարքի, Երուսաղեմի պատրիարքական տեղապահի և այնտեղ հավաքված եպիսկոպոսների հաշտություն գոյացնելու բոլոր ճիգերը և ընդմիջտ այրել համերաշխության բոլոր կամուրջները, համառորեն իր կամքը պարտադրելու և տիրանալու համար Անթիլիասի Աթոռին:

Փետրվարի 19-ին, կիրակի օր, Վեհափառ Հայրապետը Անթիլիասի Մայր Տաճարում

ներկա եղավ սուրբ պատարագին և նախագահեց լուսահոգի Գարեգին Վեհի հիշատակին նվիրված հոգեհանգստյան արարողությունն ու «Հայր մեր»-ից առաջ քարոզեց, որ «Գեղեցիկ հիշատակը երանաշնորհ Վեհի և վեր հանելով նրա ազգաշեն և եկեղեցաշեն գործունեությունը հօգուտ երկու Աթոռների սերտ և սեռն համագործակցության և կոչ արեց հայ հոգևորականության՝ «միշտ առջնորդվելու Գևորգ Զ մեծագործ Կաթողիկոսի և Գարեգին Ա առաքելաշավիղ հայրապետի հոգիով, որովհետև այդ է ճանապարհը, որ զմեզ կտանի դեպի Ս. Եկեղեցվո շինություն և ծաղկումը: Երանի՛ թե,— ասաց Վեհափառ Հայրապետը իր քարոզում,— մենք այս օրերուն դուրսն չափով մը գոնե հետևենք անոնց լուսաշավիղ օրինակին»:

Անդրադառնալով նաև կաթողիկոսական ընտրություն հարցին, Վեհափառ Հայրապետն ասաց.

«Եկե՛ք, ձեռք-ձեռքի տված մշակենք այս բերրի այգին՝ վասն մեծի փառացն Աստուծո և Հայաստանյայց Ս. Եկեղեցվո:

Մենք եկանք այստեղ այս հավատով: Մենք եկանք այստեղ, որպեսզի մեր սիրո միությունը ավելի փառավոր կերպով ընտրվի և օժվի Անթիլիասի նորնոր գահակալը: Մենք եկանք այստեղ, որպեսզի ավելի գորացնենք այս Աթոռը: Ինչքան գորավոր ըլլա Տանն Կիլիկիո Աթոռը, այնքան գորավոր կըլլա Միածնաէջ Ս. Աթոռը և որքան գորավոր մնա, անի, ծաղկի Ս. Էջմիածինը, այնքան ավելի կգորանան մեր մյուս Աթոռները: Մենք իմաստուն պետք է ըլլանք լավապես հասկնալու այս խոսքերուն նշմարիտ իմաստը:

Ս. Էջմիածինը Անթիլիասի և Անթիլիասը Էջմիածնի համար պետք է մտածեն, իրարու նեցուկ դառնան և զիրար փառավորեն:

Եվ այն ատեն մեր հոգևոր կյանքի ծաղկած ծաղիկներու արմատները կենաց ջուրով պիտի ոռոգվին:

Երբեմն, ավա՜ղ սակայն, մանր հաշիվներ պատճառ կդառնան, որ մեծ ծրագրեր ձախողին: Մենք կաղոթենք առ Աստված, որ այդ բանը չպատահի: Մեր ծրագրերը պետք է ձախողին, որպեսզի սուրբ գործը իր ընթացքը շարունակե՝ միության ոգիով և խաղաղությամբ:

Կաղոթենք, որպեսզի վաղվան արեգակին հետ առավոտ իշնե Տանն Կիլիկիո կյանքին վրա և հայոց Աստվածը օրհնություն և խաղաղություն պարգևե մեր Եկեղեցվույն և այս բարի, հուսացյալ ժողովուրդը ապահով հո-

վանի մը գոնե իր հոգիին համար» («Ուղևորություն», էջ 63—64):

Վեհափառ Հայրապետի այս պայծառ, իրավ, շինարար խոսքերն ու զգացմունքները ընդմիշտ հերքում են դիտումնավոր կերպով Մայր Աթոռին վերագրված տխուր դերը՝ Անթիլիասը շնչելու:

Վեհափառ Հայրապետը մի անգամ ևս շեշտում էր, որ ընտրությունը կատարվի հանուն մեր Եկեղեցու օգտի, շանի և միության:

Վեհափառ Հայրապետի այս ոգեշունչ քարոզից խորապես ազդված, Ս. Խորան է բարձրանում Կոստանդնուպոլսի ծերունագարդ պատրիարք Գարեգին արքեպիսկոպոս Խաչատրյանը, որը 2 օր առաջ, փետրվարի 18-ին, Անթիլիաս էր ժամանել Վեհափառ Հայրապետի հրավերով, մասնակցելու համար Երուսաղեմում գումարվելիք Եպիսկոպոսական ժողովին, մի սրտագին կոչ, հայրական հորդոր ուղղելու հոգևորականության, պատգամավորներին, որ լավի Ամենայն Հայոց Հայրապետի իմաստուն ձայնը և խաղաղություն, ներդաշնակություն լինի Եկեղեցու մեջ և ժողովրդի ծոցում:

«Խաղաղութեան ձայնն հնչեցաւ, Եկեղեցիս մի անձն եղև»:

Ո՛վ ժողովուրդ հայոց, այս ձայնը ցնցող ու ցնծացնող դարերու խորերեն կարձագանք... Խոնարհարար կմիացնեմ ես ալ իմ ձայնը մեր ազգընտիր և սիրելի Հովվապետին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Ֆիզիկական ծերությունս հաղթահարող հոգեկան երիտասարդությանս ամբողջ ուժգնությամբը կգոչեմ.— Ո՛վ լուսածին զավակներ Հայաստանյայց Եկեղեցվո Ս. Ավետարանին, մտիկ ըրեք ձայնը Ս. Ավետարանին խաղաղության: Տեսե՛ք, ի՛նչ գեղեցիկ են խոսքերը Անոր, որ կուզա լեռներու բարձունքեն, քարոզելու համար ձեզի խաղաղությունը շինարար, մեղքի կողմերու փորձությունը, որ կրնա խոռովել ու փոթորկել ձեր կյանքը և ամլության դատապարտել ձեր բոլոր աշխատանքները, գիտցեք Ձեր Աթոռին արժեքի տարողությունն ու կոչումը, մի՛ ավելին քան որ արժան եջ: Մայր Աթոռն է ձեր ալ սիրտը, որ պարտի բարախել անոր սիրո զարկերով, ձեր այս Աթոռը ինքն ալ անկե կառնե և պարտի առնել իր զորությունը, կենսունակությունը, հեղինակությունը և քաջալերությունը: Ասոնք բերեր է ձեզի Աթոռակալը, հանձին Տ. Տ. Վազգեն Ա-ի: Լսեցե՛ք իր ձայնը, որ քաղցր է, հայրական է: Չափն ու կշի՛րը ունեցեք համերաշխության և շունչն ու հոգին հաշտարար սիրու՝ Խաղաղություն-ընդձեզ, պատվական ժողովուրդ հայոց, խաղա-

ղություն ձեռք Աթոռին, որ չի դադարի ըլլալ համայն հայութեան, եթե ի մի թոթափեք նախապաշարումները ոչ քրիստոնեական հավակնութեանց և ցանկութեանց, մնաք հավատարմորեն ենթակա իր հոգևոր Մայր Աթոռին՝ Ս. Էջմիածնին: Խաղաղություն ընդ ձեզ ընդ ամենեցուն, խաղաղութեան ձայնը ցնծութեան և ուրախութեան, թող հնչե ամեն կողմ խաղաղութեան անուշ ձայնը, թող արձագանքե ամեն սրտե, որպեսզի Եկեղեցին Հայաստանյայց մի անձն ըլլա իր միակ Գլուխով և իր անդամներու անպակաս ու ներդաշնակ ամբողջութեամբ: Եթե կան քար սրտեր, թող երգեն Շնորհալիին սիրաշարժ շրթներով «Ալ՛բ անուն, Յիսուս, սիրով քո ճմլեա՛, սիրտ իմ քարեղէն», և Անոր սիրով ճմլված սիրտ մը չի կրնար չդառնալ մաքուր ընդունարանը շինարար և ստեղծագործ խաղաղութեան: Ադոք պետք ունինք ամենքս, ադոր կկարողուք մանավանդ դուք, լուսիս որդիներ պիտի ըլլաք այդ խաղաղութեան և արժանի անփոխարինելի օգնութեանը լուսո Աստուծո» («Ուղևորութիւն», էջ 65—66):

Դժբախտաբար «ձայն բարբառոյ յանպատի» մնացին նաև այս սրտառու հորդորներն ու հայրական խրատները քաղաքական ազդեցութեան ենթարկված եկեղեցականների խմբի՝ Ս. Զարեհ, Ս. Խորեն և Ս. Ղևոնդ եպիսկոպոսների և նրանց հատվածամտ պաշտպանների համար:

Փետրվարի 19-ին, կիրակի օր, երկկուսան Անթիլիասում գումարվեց երկրորդ եպիսկոպոսական ժողովը՝ Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ, որին ներկա էին Գարեգին պատրիարքը, Ս. Նիշեհ, Ս. Տիրան, Ս. Մամբրե, Ս. Խորեն, Ս. Զարեհ, Ս. Փառեն, Ս. Դերենիկ, Ս. Ղևոնդ, Ս. Սերովբե, Ս. Շնորհք, Ս. Շավարշ, Ս. Վարդան սրբազանները: Ժողովում առաջինը խոսք է անում Վեհափառ Հայրապետը և խոր վիշտ հայտնում, որ իր հայրապետական հորդորներն ու հայրական խոսքերը չէին կարողացել հաշտեցնել կողմերը և ինքը ստիպված կմեկնի հաջորդ օրը, թեև եկել էր «Անթիլիաս ողևորութեամբ և լավատեսութեամբ, մասնակցելու Կիլիկիո կաթողիկոսի ընտրութեան և օծման հանդիսութեանը» («Ատենագրութիւն եպիսկոպոսական Բ ժողովի»):

«Գերաշնորհ Ս. Խորեն և Ս. Զարեհ սրբազանները իրենց խոսքերուն մեջ փորձեցին բացատրել Պատգամավորական ժողովի ընթացքը, և մանավանդ գերաշնորհ Ս. Զարեհ

եպիսկոպոսը հայտարարեց, որ Անթիլիասի Աթոռը և նորընտիր կաթողիկոսը ամեն գնով հավատարիմ պիտի մնան Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և թե ինք անձնապես բարեկամ պիտի մնա Նորին Ս. Օծութիւն Ամենայն Հայոց Վազգեն Ա Կաթողիկոսի:

...Կոստանդնուպոլսո ծերունազարդ սրբազան պատրիարք հայրը հուլիշ, ազդեցիկ և մտերմական հայրական խոսքերով հորդորեց և կոշ ըրավ գերաշնորհ Ս. Զարեհ և Ս. Խորեն եպիսկոպոսներուն, որ վճռական կեցվածքով մը, հայ հոգևորականի հատուկ եկեղեցասիրական ոգիով և քրիստոնեական արիութեամբ միանան Հայ Եկեղեցվո հոգևոր իշխանավորներուն հետ և առիթ չստեղծեն երկպառակութեան և եկեղեցական միութեան կարգապահական ոգիի խախտման: «Բանալին այս կացութեան՝ ձեռք երկուքի ձեռքին մեջ է,— ըսավ սրբազան պատրիարք հայրը,— Եթե դուք ուզեք, կրնաք կացութիւնը փրկել և աղով ոչնչով տուժած չըլլար Անթիլիասի Աթոռը, այլ ընդհակառակը աղով ավելի պիտի ամրապնդվի և զորանա ինքը՝ Աթոռը և ապա նորընտիր կաթողիկոսը»,— եղբակացուց Գարեգին պատրիարքը» («Ատենագրութիւն եպիսկոպոսական Բ ժողովի»):

Ժողովին ներկա մյուս բոլոր սրբազան հայրերը նմանապես ծանրացան այն հանգամանքի վրա, որ քաղաքական կազմակերպութիւնների այս պայքարի և հակամարտութեանց շրջանին Հայ Եկեղեցին գտնվում է շատ լուրջ վտանգի առաջ և Մայր Աթոռի գլխավորութեամբ նվիրապետական Աթոռների սրբազան պարտականութիւնն է համերաշխ աշխատանքով, միասնական ջանքերով և զործունեութեամբ առաջը առնել այդ վտանգին և Եկեղեցուն ազատել քաղաքական ազդեցութեանց ենթարկվելու աղետից:

Ժողովական սրբազան հայրերը, այս գաղափարների և սկզբունքի լուսի տակ, մի անգամ ևս եղբայրական ոգով կոշ արեցին Ս. Զարեհ, Ս. Խորեն և Ս. Ղևոնդ սրբազանների խղճին, հայ հոգևորականի գիտակցութեան և պատասխանատւութեան զգացմունքին, և խնդրեցին ետե՛րից՝ կատարել մի վերջին ազնվական ժեստ, հերոսական ճիգ՝ փրկելու Հայ Եկեղեցու հեղինակութիւնը, դիրքն ու անունը ամեն տեսակի ոսնձգութիւններից, ի շինութիւն Ս. Եկեղեցու և ի խաղաղութիւն հայ հավատացալ ժողովրդի:

Բայց Տ. Զարեհ, Տ. Խորեն և Տ. Ղևոնդ սրբազանները այլևս տեղը չէին իրենց խըղճին ու կամքին: Նրանց մեջ, բարոյական ահաբեկման և ճնշման տակ, խորապես արատացել էր ոչ թե եկեղեցու շահը, Ազգի մատացել էր ոչ թե եկեղեցու շահը...

Ժողովի վերջում նորին Ա. Օծուխյունը Իր հայրական օրհնությունը տվեց լավագույն բարեմաղթություններով տեղապահ սրբազան հոր, Կիլիկյան Աթոռի միաբանության և համայն հայ հավատացյալ ժողովրդին և հաջորդ օրը, փետրվարի 20-ին, երկուշաբթի, մեկնեց Եգիպտոս՝ շարունակելու Իր հովիտային ապաստանը, խորապես համոզված, որ Անթիլիասի կաթողիկոսական բնակարանը խաղաղ և համեմատաբար պայմաններում ստեղծվելու բոլոր միջոցները սպառվել էին և փակված՝ համաձայնություն բոլոր դռները:

Մինչ այդ, փետրվարի 19-ին, իսկ և Տիրան արքեպիսկոպոսների և Փառեն եպիսկոպոսի անունից տեղապահ Խորեն սրբազանին ուղղվում էր հետևյալ հեռագիրը, որտեղ սրբազանները իմացնում էին տեղապահին այն մասին, որ 1952 թվականից ի վեր կաթողիկոսական ընտրելիների հնգամյակն ցանկի մեջ մտած իրենց անունները չդրվեն 1956 թվականի կաթողիկոսական ընտրելիների հնգամյակն ցանկում:

Վտորագրյալներու անունները ժամանակին, 1952-ին, Կիլիկիո Կաթողիկոսության թեկնածուներու հնգամյակն ցանկին մեջ դրված էին: Այս գրով բուրբուղի կհրաժարինք թեկնածութեն և կծանուցանենք ձեզ, որ մեր անունները պետք է վերցվին այդ ցանկին վրային: Մեզմե ոմանց համար այս հրաժարականը արդեն կրկնություն է» (Ձևակ, 1959, № 1—2, էջ 11):

Փետրվարի 20-ին, Վեհափառ Հայրապետի մեկնումից հետո, առավոտյան ժամը 10-ին, Անթիլիասի Վեհափառի դահլիճին մեջ, հատվածական Պատգամավորական ժողովը, գերաշնորհ Տ. Խորեն եպիսկոպոսի նախագահությամբ գումարվելով, Կիլիկիո կաթողիկոս է ընտրում Հալեպի առաջնորդ գերաշնորհ Տ. Զարեհ եպիսկոպոս Փայասյանին. միակողմանի պայմանների մեջ:

Զարեհ եպիսկոպոսի ընտրության դեմ բողոքում է ոչ միայն Սիրիայի և Լիբանանի հայությունը այդ ընտրությունը անվավեր հայտարարելով, այլ նաև Անթիլիասի միաբանության մեծամասնությունը, կաթողիկոսական տեղապահ Տ. Խորեն եպիսկոպոսին ուղղված հետևյալ դրուխյամբ.

«Ամենայն Հայոց Հայրապետը, որ կուզար սիրո և խաղաղության ուստերով, կամենի սրտաբեկ ու վշտահար, Իր հետ տանելով սրտերը հայ ժողովուրդի ընտրանիին. վկարեկ գիրքերվան հանրագրությունը, նույնիքն ժողովրդական լայն զանգվածներու, որ ինչպես Վեհափառի ժամանման, նմանապես հրաժեշտի առիթով ցույց տվավ փարոսը միություն և միասնականություն, և Հայ եկեղեցվո ողջ հոգևորականություն:

Այս անբաղձալի, անպատվաբեր և ազգազավ մթնոլորտի մեջ մենք ևս կմիանանք միության և միասնականության միահամուռ արտահայտության, մեր ձայները միացնելով մեր միաբանակից հարց՝ գերաշնորհ իսկ, Փառեն և Գերենիկ սրբազաններուն: Կբողքենք բունատիրական կեցվածքին դեմ, որով կուզեն ապօրեն կերպով կաթողիկոս մը պարտադրել և վիրավորել մեր միությունը: Կբողքենք, որ միաբանությանս պատրաստած թեկնածուներու հնգամյակն ցանկին չորսին հրաժարելեն իսկ նորագույն և լրակատար ցանկի մը համար չեք դիմած միաբանությանս, որ միակ իրավատերն է, և կպահանջենք, որ կեցնեք այս ընտրական ապօրեն ձեռնարկը և ճանչնաք միաբանությանս ժողով գումարելու, կացությունը ուսումնասիրելու իրավունքը: Այլապես կմերժենք ճանչնալ հանրային կարծիքին, միության և միասնականության և ամեն օրինավորության հակառակ պարտադրվելիք կաթողիկոս մը, ամեն պատասխանատվություն թողլով ձեզի...»

Այս դրուխյան տակ ստորագրել էին՝ «Փառեն եպիսկոպոս Միլոնյան, Գերենիկ եպիսկոպոս Փոլատյան, Գեհլ ժայռագույն վարդապետ Ճերեճյան, Ծահե վարդապետ Աճեմյան, Գևորգ արեղա, Ներսես արեղա, Գյուլտ արեղա, Մեսրոպ արեղա, Զավեն արեղա:

Խաղ արքեպիսկոպոս Աջապահյան ևս կստորագրեր անշուշտ այս հայտարարությունը, եթե Եգիպտոս մեկնած չլլար» (Ռուկերություն, էջ 76—77):

(Շարունակելի)